

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒՅԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԱՆ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնը, համաձայն ԱՆ 2020 թվականի օգոստոսի 6-ի թիվ 2636-Ա հրամանով հաստատված իր կանոնադրությանը, 2022 թվականի ընթացքում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և ՁԻԱՀ-ին զուգորդող հիվանդությունների համաճարակաբանական հետազոտությունների իրականացում, դրանց զարգացման միտումների հետազոտում և վերլուծություն.

1.1 ՄԻԱՎ վարակով պացիենտի համաճարակաբանական հետազոտություն

2022թ.-ի ընթացքում իրականացվել է ՄԻԱՎ վարակ ախտորոշում ստացած բոլոր պացիենտների համաճարակաբանական հետազոտություն (ՀՀ-ի 535 և օտարերկրյա 70 քաղաքացիներ), որի ընթացքում հավաքագրվել է պացիենտի վարակման հավանական ուղու, վայրի և ժամանակի, զուգընկերների, ընտանեկան կարգավիճակի և այլ տեղեկատվություն, ինչպես նաև տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ-ի վերաբերյալ:

1.2 ՄԻԱՎ վարակով պացիենտի զուգընկերոջ, մտերիմի, հարազատի ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում

Իրականացվել է ՄԻԱՎ վարակով պացիենտների կոնտակտավորների բացահայտմանն ուղղված աշխատանքներ, կազմակերպվել են երեխաների և կոնտակտավորների հետազոտություններ, ընտանիքի անդամներին տրամադրվել է խորհրդատվություն: 2022թ.-ի ընթացքում թվով 399 ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրվել ՄԻԱՎ վարակով պացիենտի զուգընկերոջը, մտերիմին, հարազատին:

1.3 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակաբանական դիտարկման արդյունքների վերլուծություն

Իրականացվել է ՄԻԱՎ վարակի համաճարակաբանական դիտարկման համակարգի շրջանակներում հավաքագրված տվյալների վերլուծություն՝ համաճարակաբանական նկարագրական մեթոդով՝ ըստ սեռի, տարիքի, աշխարհագրական տարածվածության, փոխանցման ուղու, վարակման հնարավոր ժամկետների, բնակավայրի և վարակման հավանական վայրի, բնակչության տարբեր խմբերին պատկանելիության, հետազոտման պատճառների և այլն: Ուսումնասիրվել են ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի համաճարակի զարգացման միտումները:

2. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ու բուժման աշխատանքների իրականացում

2.1 ՀՌՎ բուժում

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բուժման մեջ է գտնվել 3095 ՀՀ քաղաքացի և 94 օտարերկրացի: ՀՌՎ բուժման 1-ին շարքի սխեմայի դեղորայք է ստացել 2863 ՀՀ (33 երեխա՝ 0-14տ և 2830 մեծահասակ) և 91 օտարերկրյա քաղաքացի, 2-րդ շարքի սխեմայի դեղորայք է ստացել 221 ՀՀ (7 երեխա՝ 0-14տ և 214 մեծահասակ) և 3 օտարերկրյա քաղաքացի:

2.2 Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում

2022թ.-ի ընթացքում մորից երեխային վարակի կանխարգելում է ստացել 48 ՀՀ քաղաքացի: 2022թ.-ին 49328 (49289 ՀՀ քաղաքացի և 39 օտարերկրյա քաղաքացի) հետազոտված հղիներից ՄԻԱՎ դրական կարգավիճակ է ստացել 25 ՀՀ և 1 օտարերկրացի կին: Եվս 2 հղի հայտնաբերվել է որպես ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցողի զուգընկեր: Ներկայացված հղիներից 4-ը իրականացրել են արհեստական ընդհատում, 1-ը տեղափոխվել է Ռուսաստանի դաշնություն և 1 հղի էլ հայտնաբերվել է արդեն ծննդալուծման փուլում, մնացած 22 (21 ՀՀ և 1 օտարերկրացի) հղիները ստացել են մորից երեխային կանխարգելում:

ՊՇՌ 1-ին հետազոտությամբ ՄԻԱՎ-ի ԴՆԹ չի հայտնաբերվել 46 երեխայի (44 ՀՀ և 2 օտարերկրացի) մոտ: ՊՇՌ 1-ին հետազոտությամբ ՄԻԱՎ-ի ԴՆԹ հայտնաբերվել է 1 երեխայի մոտ, իսկ 3 երեխայի ՊՇՌ 1-ին հետազոտություն հնարավոր չի եղել իրականացնել՝ տեխնիկական խնդիրների պատճառով:

2.3 Նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելում

2022թ.-ին նախակոնտակտային կանխարգելում ստացել է 43 անձ: Հետկոնտակտային կանխարգելում ստացել է 67 անձ, այդ թվում՝ 54 ոչ մասնագիտական և 13 մասնագիտական: Հետկոնտակտային կանխարգելում ստացածներից 18-ը հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:

2.4 Խոցելի խմբերի և միգրանտների շրջանում իրականացված ծրագրային աշխատանքներ

2022թ.-ի ընթացքում իրականացվել է մշտադիտարկում խոցելի խմբերի, միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում, ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպություններում և ՀՀ մարզային բժշկական հաստատություններում:

SUS-ների, ԿՍԿ-ների և ՏԱ-ների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում ԳՀ ծրագրի շրջանակներում ՆՍ ՄՀԿ-ի կողմից 2022թ.-ի ընթացքում խոցելի խմբերից SUS-ների շրջանում կատարվել է 8013 թեստավորում, որի արդյունքում հայտնաբերվել է 122 նախնական դրական դեպք և հաստատվել 79-ի մոտ, որից 2-ը հին պացիենտ: ԿՍԿ-ների շրջանում իրականացվել է 3201 թեստավորում, հայտնաբերվել է 29 նախնական դրական դեպք և հաստատվել է 11-ի մոտ (1-ը հին պացիենտ): ՏԳ-ների շրջանում իրականացվել է 233 թեստավորում, որից հայտնաբերվել և հաստատվել է 3 դրական դեպք (1-ը հին պացիենտ): ԹՆՕ-ների շրջանում կատարվել է 5555 թեստավորում, որի արդյունքում հայտնաբերվել է 42 նախնական դրական դեպք և հաստատվել 32-ի մոտ (5-ը հին պացիենտ):

ՄԻԱՎ-ի հայտնաբերում քաղաքաբնակ միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում ԳՀ ծրագրի 2022թ.-ի ընթացքում իրականացվել է 13799 թեստավորում, որից գրանցվել է 88 նախնական դրական դեպք և հաստատվել 49-ը (15-ը հին պացիենտ):

Շրջիկ խմբերի միջոցով իրականացվել է 1986 հետազոտություն, որից հայտնաբերվել է 18 սիֆիլիսի, 4 ՄԻԱՎ դրական, 17 հեպատիտ Բ դրական և 22 հեպատիտ Ց դրական դեպքեր: Հեպատիտ Ց-ի նախնական դրական դեպքերից առաջնային է եղել 10-ը, որոնք հաստատվել են նաև ԻՀԱԿ-ում՝ որակական ՊՇՌ հետազոտությամբ:

3.ՀՀ տարածքում, ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի հայտնաբերմանն ուղված լաբորատոր հետազոտություններ կատարող կազմակերպությունների գործունեության որակի նկատմամբ հսկողության գործընթացի մասնակցություն

2022թ.-ի ընթացքում իրականացվել են այցեր 63 բժշկական կազմակերպությունների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն կատարող լաբորատորիաներ՝ որակի հսկողություն իրականացնելու նպատակով:

4. ՄԻԱՎ վարակի, ՁԻԱՀ-ին զուգորդող հիվանդությունների կանխարգելմանը, ՄԻԱՎ վարակակիրների և ՁԻԱՀ-ով պացիենտների ախտորոշմանը, բուժմանը և սոցիալական պաշտպանվածությանն ուղված ազգային ռազմավարական ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում

4.1 Ախտորոշում

ՄԻԱՎ-ի կանխարգելման շրջանակներում իրականացվող աշխատանքների արդյունքում 2022թ.-ի ընթացքում հայտնաբերվել է ՄԻԱՎ վարակի 535 նոր դեպք ՀՀ քաղաքացիների և 70 դեպք օտարերկրյա քաղաքացիների շրջանում: Ախտորոշվել է ՁԻԱՀ-ի 230 և մահվան 74 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում: Վիրուսային ծանրաբեռնվածության վերաբերյալ 2022թ.-ի ընթացքում հետազոտվել է 2329 ՀՀ քաղաքացի, որոնցից 1641-ի մոտ գրանցվել է վիրուսի չհայտնաբերվող մակարդակ (0-1000):

4.2 Օպորտունիստական վարակներ

2022թ.-ին 456 ՄԻԱՎ-ով ապրող ՀՀ քաղաքացի ստացել է ՕՎ կանխարգելիչ բուժում, որից 151-ը 2022թ.-ի հաստատված դեպքեր են: Բոլոր պացիենտներ ստացել են պնևմոցիստային թոքաբորբի կանխարգելիչ բուժում, տոքսոպլազմոզը՝ 64.5%, ատիպիկ միկոբակտերիոզը՝ 31.6%: 188 ՄԻԱՎ-ով ապրող ՀՀ քաղաքացի ստացել է ՕՎ բուժում, որոնցից 29-ը 2022թ.-ի հաստատված դեպքեր են: 2022թ.-ին իզոնիազիդով ՏԲ-ի կանխարգելիչ բուժում ստացել է 266 ՀՀ քաղաքացի:

5. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ՁԻԱՀ-ին զուգորդող հիվանդությունների խնդիրներին նվիրված ազգային և միջազգային համագումարների, համաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, վարժանքների, խորհրդակցությունների կազմակերպում և մասնակցություն

2022թ.-ի մայիսին Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի ամբուլատոր կլինիկայի բակում (հասցե՝ Աճառյան 2) բացվել է ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակին նվիրված պուրակ:

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրը՝ 2022թ.-ի դեկտեմբերի 1-ին, ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում ՌԴ օգնության ծրագրի շրջանակում տեղի է ունեցել «ՍՊԻԴ ինֆուսյազ» տարածաշրջանային հասարակական կազմակերպության աջակցությամբ Հայաստանին նվիրաբերված հերթական շարժական բուժախտորոշիչ կլինիկայի հանդիսավոր բացումը: Արարողությանը հաջորդել է «ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրը՝ որպես ջանքերի մեկտեղման նոր հնարավորություն» խորագրով համաժողովը: Մասնագետները ներկայացրել են ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ներկա վիճակն ու կանխարգելման ուղղությամբ կատարվող աշխատանքները, նախանշել առաջիկա ծրագրերը:

6. Ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշում, այդ հիվանդություններով տառապող անձանց մասնագիտական ստացիոնար և ամբուլատոր բուժկանխարգելիչ օգնության կազմակերպում

6.1 Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում ստացիոնար և ցերեկային ստացիոնար պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում է ստացել **5678** պացիենտ, որոնց քանանակակազմը ըստ տարիքային խմբերի, տես **Աղյուսակ 1-ում**:

Հ/հ	Հիվանդությունների անվանումը	Ծածկագիրն ըստ ՀՄԴ* X	Ընդունվել են ընդամենը	Մինչև 18տ	18տ-ից մեծ
	Ընդամենը		5678	3166	2512
1	Covid-19	U07.1	788	465	323
2	ՄԻԱՎ	B20-B24	127	0	127
3	Վիրուսային հեպատիտներ	B15-B19	43	3	40
4	Աղիքային վարակիչ հիվանդություններ	A00-A09	2969	1941	1028
8	Բրուցելյոզ	A23	83	19	64
9	Լեպտոսպիրոզ	A27	1	0	1
10	Կապույտ հազ	A37	4	4	0
11	Քուբեշ	A38	54	52	2
12	Մենինգոկոկային վարակ	A39	2	2	0
13	Սեպսիս	A40, A41	8	3	5
14	Կարմիր քամի	A46	43	2	41
15	Կատաղություն	A82	1	0	1
16	Հասարակ հերպեսով հարուցված հիվանդություններ	B00	2	1	1
17	Ջրծաղիկ	B01	488	244	244
18	Գոտևորոզ որքին	B02	4	2	2
21	Մաշկի և լորջաթաղանթի ախտահարումով բնորոշվող վիրուսային վարակներ	B08-B09	34	34	0
23	Վարակային մոնոնուկլեոզ	B27	47	30	17
24	Վիրուսային վարակ չճշտված տեղակայմամբ	B34	10	9	1
25	Միկոզներ	B35-B49	1	0	1
27	Լեյշմանիոզ	B55	1	0	1
28	Հելմինթոզ	B65-B83	1	0	1
30	Այլ վարակիչ հիվանդություններ	Այլ Աև B	4	4	0

31	Չարորակ նորագոյացություններ	C00-C97	1	0	1
34	Արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդություններ	D50-D89	4	2	2
35	Վահանաձև գեղձի հիվանդություններ	E00-E07	5	0	5
46	Գերճնշումային հիվանդություն	I10-I15	1	0	1
47	Սրտի իշեմիկ հիվանդություն	I20-I25	1	0	1
48	Արյան շրջանառության համակարգի այլ հիվանդություններ	i26-i99	4	0	4
49	Սուր շնչառական վարակներ	J00-J06, J20-J22	560	210	350
50	Գրիպ և թոքքորբ	J09-J18	95	83	12
52	Շնչառական օրգանների այլ հիվանդություններ	J- Այլ	2	0	2
53	Մարսողական օրգանների հիվանդություններ	K00-K93	71	20	51
54	Մաշկի և ենթամաշկային բջջանքի հիվանդություններ	L00-L99	10	3	7
55	Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ	M00-M99	7	3	4
56	Միզասեռական համակարգի հիվանդություններ	N00-N99	4	2	2
58	Ախտանիշեր, նշաններ եվ կլինիկ. ու լաբ. հետազոտ. հայտնաբերված ախտաբ. շեղումներ՝ այլ դասերում չդասակարգված	R00-R99	169	22	147
59	Վնասվածքներ, թունավորումներ եվ արտաքին պատճառների ներգործության որոշ այլ հետեվանքներ	S-T	3	2	1
60	Այլ հիվանդություններ	Այլ	26	4	22

Աղյուսակ 1

6.2 Ամբուլատոր խորհրդատվություններ և/կամ բուժում է ստացել 1859 պացիենտ:

6.3 Ազգային ծրագրի շրջանակներում 838 պացիենտ ստացել է բուժում ուղղակի ազդեցության հակավիրուսային պրեպարատներով՝ քրոնիկ վիրուսային հեպատիտ C-ի կապակցությամբ:

7. Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելման ուղղությամբ իրականացված աշխատանքներ

7.1. Կենտրոնը մասնակցել է Առողջապահության նախարարության կողմից կազմակերպված

«Վարակի հսկողության ծրագրերի գործադրման գնահատմանը» IPCAF գործիքով: Գնահատման արդյունքում՝ կենտրոնը համապատասխանել է՝ ըստ ԱՀԿ-ի գնահատման բալերի Առաջադեմ մակարդակի՝ ստանալով 800-ից 685 միջին բալ:

7.2. Ապահովվել է թափոնների անվտանգ գործածության գործընթացը՝ համաձայն ԱՆ 2003 թվականի թիվ 03-Ն հրամանի պահանջների, մասնավորապես՝ դրանց տարանջատումը՝ ըստ տեսակների հավաքումը և տեղափոխումը ժամանակավոր պահման տարածք, որտեղից, «Էկոպրոտեկտ» ՍՊԸ կազմակերպության հետ պայմանագրային հիմունքներով, 2 մասնաճյուղերից հեռացվել է ընդհանուր 8680 կգ բժշկական թափոն: Թափոնների հավաքման, տարանջատման ընթացքում բժշկական անձնակազմի շրջանակներում անբերահաջող դեպքեր չեն արձանագրվել:

7.3. Ձեռքերի հիգիենայի միջազգային օրվան ընդառաջ բուժաշխատողների համար կազմակերպվել և իրականացվել է սեմինար՝ «Ձեռքերի միջազգային մոտեցումներով լվացում» թեմայով:

7.4. Վարակի կանխարգելման և տարածման նպատակով ապահովվել է ՀՀ ԱՆ 2015 թվականի, սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի պահանջները, մասնավորապես՝ իրականացվել են ախտահանման և մանրէազերծման աշխատանքներ, որի արդյունքում օգտագործվել է 39 լիտր ֆերմենտային մաքրող նյութ, 18800 հաբ քլոր պարունակող ախտահանիչ նյութ և 5 լիտր բարձր մակարդակի ախտահանիչ նյութ: Ամսական կտրվածով իրականացվել է շրջակա միջավայրի մակերեսների, օդի և բժշկական իրերի մանրէազերծման որակի լաբորատոր հետազոտություններ:

7.5. Սուր շնչառական վարակների և գրիպի սեզոնին ընդառաջ կազմակերպվել և իրականացվել է թվով 75 բուժաշխատողի պատվաստում գրիպի նկատմամբ:

7.6. Ներանոթային սարքերով պայմանավորված՝ ներհիվանդանոցային վարակների կանխարգելման նպատակով ապահովվել է ԱՆ 2017թ-ի, հունիսի 21-ի թիվ 2007-Ա հրամանի պահանջները, մասնավորապես՝ մանրէաբանական հետազոտության են ենթարկվել թվով 80 ծայրամասային կաթետրի նմուշ և 120 ծայրամասային կաթետրից վերցված քսուկ: Արդյունքում՝

7-ի մոտ անջատվել են ախտածին մանրէ, որոնցից 6-ը ԲԿ-ից դուրս տեղադրված կաթետրներից են: Ներանոթային սարքերով պայմանավորված ներհիվանդանոցային վարակման դեպքեր չեն արձանագրվել:

7.7. Կիսամյակը մեկ անգամ բուժաշխատողների համար իրականացվել են դասընթացներ, մասնավորապես՝ «Թափոնների անվտանգ գործածություն», «Բժշկական իրերի և շրջակա միջավայրի ախտահանում և մանրէազերծում», «Անվտանգ ներարկումների իրականացում», «Կապկի ծաղկի կանխարգելում» և այլ թեմաներով:

7.8. Ապահովել է վարակի հսկողության պատասխանատուի մասնակցությունը JICA KCCP ծրագրի եռամսյա դասընթացին:

7.9. Թարմացվել են ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների, ձեռքերի հիգիենայի՝ կիրառման, ցուցումների և տեխնիկայի, հակաբիոտիկների կիրառման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող վահանակներ:

7.10. Արձանագրվել է մասնագիտական վնասվածքների 2 դեպք և ՀՀ ԱՆ 2012թ.-ի դեկտեմբերի 6-ի 2837-Ա հրամանի «Սրածայր գործիքներով և արյան հետ պատահական շփման դեպքում բուժաշխատողների մասնագիտական վարակվածության կանխարգելման» մեթոդական ուղեցույցի համաձայն՝ նրանց նկատմամբ իրականացվել են ՀԲՎ, ՀԲՑ, ՄԻԱՎ հետազոտություններ և տրվել են ՀՌՎ միջոցներ:

7.11. ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի թիվ 1089-Ն որոշման և ՀՀ կառավարության 2003թ.-ի մարտի 27-ի թիվ 347-Ն որոշման հրամանի պահանջների շրջանակում, երկու մասնաճյուղերից բժշկական պարտադիր քննության է ենթարկվել համապատասխանաբար 134 և 192 աշխատակից:

7.12. Մենինգոկոկային վարակով 2 պացիենտների կոնտակտավորների վերահսկման նպատակով իրականացվել է ջերմության հսկողություն և բկանցքի մանրէաբանական հետազոտություն Վերակենդանացման և ԻԹ բաժանմունքի 18 աշխատակցի մայիս ամսին և 6 աշխատակցի՝ դեկտեմբերին:

8. Գիտական և գիտաթժշկական հետազոտությունների իրականացում ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ հիմնարկների, ընկերությունների հետ համատեղ ծրագրերով

8.1 Համագործակցություն Երևանի պետական համալսարանի Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հետ. Ծրագրի անվանում՝ «SARS-CoV-2-ի հետ ասոցացված գենոմային անկայունության նոր գենետիկական մարկերների ու դրա կարգավորման մոտեցումների մշակում». Ծրագրի կոդ՝ 21AG-1F068:

8.2 Ռուսաստանի Դաշնության Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության վերահսկման դաշնային ծառայության (Ռոսպոտրեբնադզոր) հետ համատեղ 2022 թվականին մեկնարկել են մի շարք համատեղ գիտահետազոտական ծրագրեր՝

- 1) «Մոլեկուլային համաճարակաբանության մեթոդների օգտագործումը ՄԻԱՎ վարակի համաճարակի հսկողության և դրա տարածման ու զարգացման հակազդման նպատակով»,
- 2) «ՄԻԱՎ-ի համաճարակաբանական հսկողության մոլեկուլային գենետիկական ուղեկցությունը: ՄԻԱՎ վարակի ախտորոշիչ թեստերի արդյունավետության վրա վիրուսային պոպուլացիայի աճող հետերոգենության ազդեցության վերլուծություն»,
- 3) «Վիրուսային հեպատիտ C-ի պոպուլյացիայի բազմազանության ուսումնասիրություն և HCV վարակի թերապիայի արդյունավետության վերլուծություն Հայաստանի Հանրապետությունում»:

8.3 ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի աջակցությամբ իրականացվել է «Ընթացիկ տարում ՄԻԱՎ վարակ ախտորոշվածների շրջանում ՄԻԱՎ-ով վարակման վաղեմիության որոշում» հետազոտություն:

8.4 Առողջապահության համաշխարհային կազմակերպության աջակցությամբ մեկնարկել է «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ալգորիթմների օպտամալացումը Հայաստանում. ստուգիչ (վերիֆիկացիայի) արձանագրություն՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համապատասխան շճաբանական թեստերն ընտրելու և ընդհանուր կեղծ ռեակտիվության մակարդակը գնահատելու համար» հետազոտություն:

9. Լաբորատոր – գործիքային ախտորոշման բաժին ծառայության կատարած աշխատանքներ

9.1.Տարվա ընթացքում լաբորատոր ախտորոշման բաժնում իրականացվել են մի շարք հետազոտություններ՝ ընդհանուր կլինիկական, կենսաքիմիական, իմունաբանական (CD4+ և CD8+ T-լիմֆոցիտների քանակական որոշում, օպորտունիստական և ՄԻԱՎ վարակին զուգորդող վարակների ախտորոշում), մանրէաբանական հետազոտություններ, ՊՇՌ մեթոդով՝ COVID-19, վիրուսային հեպատիտների, տուբերկուլոզի ախտորոշում, ՄԻԱՎ-ի որակական և քանակական որոշում:

9.2. Հաշվետու ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնության օգնության և Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերի շրջանակում գյուղական և քաղաքային համայնքներում միգրանտների և նրանց ընտանիքների անդամների շրջանում իրականացվել են հետազոտություններ ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի, սիֆիլիսի վերաբերյալ: Հետազոտություններն իրականացվել են համայնքային ամբուլատորիաներում և շարժական բուժախտորոշիչ կլինիկաներում:

9.3.Հաշվետու ժամանակահատվածում թարմացվել է ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական արյան փորձանմուշների բանկը:

9.4.Բաժնի աշխատակիցներն իրականացրել են որակի արտաքին հսկողություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում (անկախ սեփականության ձևից), տրամադրել են մեթոդական օգնություն և տեխնիկական աջակցություն: Որակի արտաքին հսկողության շրջանակում ուսումնասիրություններ են կատարվել Երևանի 39 և մարզային 24 լաբորատորիաներում ,որոնց արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են տարվա ընթացքում՝ սահմանված ժամկետներում:

9.5.Բաժնի աշխատակիցները մասնակցել են ՌԴ Ռոսպոտրեբնազդրի համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին՝ «ՄԻԱՎ-ի դեղակայուն շտամների տարածման կանխում», «ՄԻԱՎ վարակի կապակցությամբ բժշկական օգնություն ստացող պացիենտների սոցիալ-ժողովրդագրական և կլինիկալաբորատոր բնութագիրը»:

9.6.Հաշվետու ժամանակաշրջանում բաժնի աշխատակիցները ստացել են Շարունակական Մասնագիտացման Հավաստագիր՝ 2 բժիշկ-լաբորանտ (1 ամբուլատոր, 1 ստացիոնար կլինիկայի),14 լաբորանտ (5 ամբուլատոր,9 ստացիոնար կլինիկայի):

9.7.Տարվա ընթացքում բաժնի աշխատակիցները մասնակցել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին նվիրված աշխատաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների, բուժաշխատողների վերապատրաստման դասընթացների:

Լաբորատոր-գործիքային ախտորոշման բաժնի աշխատակիցների 2022թ. կատարած հետազոտությունների թիվը

Կատարված հետազոտությունը	Հետազոտությունների թիվը
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն ԻՖԱ մեթոդով	25286
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն էքսպրես մեթոդով	6693
Ռեֆերենսային հետազոտություն (իմունաբլոտ)	696
CD4+ և CD8+ T-լիմֆոցիտների քանակական որոշում	2299
Վիրուսային հեպատիտ Բ. մակերեսային հակաձնի հայտնաբերում՝ ԻՖԱ մեթոդով	954
Վիրուսային հեպատիտ Ց. ընդհանուր հակամարմինների հայտնաբերում՝ ԻՖԱ մեթոդով	1131
Կրիպտոկոկային հակաձին հայտնաբերում շիճուկում և ողնուղեղային	56
Ալֆա-ֆետոպրոտեինի քանակական որոշում (AFP)	107
Վիրուսային հեպատիտ Ց. ընդհանուր հակամարմինների հայտնաբերում՝ էքսպրես մեթոդով	169
Ցիտոմեգալովիրուսային վարակ. IgG հակամարմինների հայտնաբերում	52
Սիֆիլիս. հետազոտություն էքսպրես մեթոդով	834
Տոքսոպլազմոզ. IgG հակամարմինների հայտնաբերում	204
Սիֆիլիսի հակամարմինների հայտնաբերում ԻՖԱ մեթոդով	237
Էպշտեյն-Բարր վիրուսի (EBV) հակամարմինների հայտնաբերում՝ ԻՖԱ մեթոդով	100
Շճաբանական հետազոտություններ	<u>38818</u>
Կենսաքիմիական հետազոտություններ	<u>47509</u>

Ընդհանուր կլինիկական հետազոտություններ	<u>3427</u>
ՊՇՌ ՄԻԱՎ-ի վիրուսային ծանրաբեռնվածության որոշում	3374
ՊՇՌ ՄԻԱՎ-ի որակական հետազոտություններ	290
COVID-19 -ի ՊՇՌ որակական հետազոտություններ	1877(պետպատվեր) 2366(վճարովի)
Վիրուսային հեպատիտ Բ(HBV) ՊՇՌ հետազոտություններ	213
Վիրուսային հեպատիտ Ց(HCV, HCV-genotipe) ՊՇՌ հետազոտություններ	1471+420
Վիրուսային հեպատիտ Դ(HDV) ՊՇՌ հետազոտություններ	24
Պարվովիրուսի ՊՇՌ հետազոտություններ Parvovirus B-19 ՊՇՌ հետազոտություններ	18
Էպշտեյն-Բարր վիրուսի (EBV) ՊՇՌ հետազոտություններ	247
Յերսինիոզի հարուցիչի հայտնաբերման Yersinia ՊՇՌ հետազոտություններ	69
Ցիտոմեգալովիրուսային վարակ (CMV) ՊՇՌ հետազոտություններ	219
Մարդու լեյկոցիտար անտիգենի HLA-B5701 ՊՇՌ հետազոտություններ	257
Տուբերկուլոզային միկոբակտերիայի և Ռիֆամպիցինի հայտնաբերման MTB/RIF ՊՇՌ հետազոտություններ	46
ՊՇՌ հետազոտություններ	<u>10891</u>
Հետազոտությունների ընդհանուր թիվը	100645

Ստացիոնար կլինիկայի լաբորատոր բաժնում իրականացվել են հետևյալ հետազոտությունները

Կատարված հետազոտությունը	Հետազոտությունների թիվը
---------------------------------	--------------------------------

Կլինիկական	27375
Կենսաքիմիական	70747
Միկրոբիոլոգիական	50455
Իմունոլոգիական	7832
Հետազոտությունների ընդհանուր թիվը	156409